ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ

ք. Երևան 01 հոկտեմբերի 2019թ. Ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ Է. Գյումրյան
Գնահատող անդամներ (ԳԱ)՝ Շ. Հարությունյան, Հ. Մելիքյան
Բացող անդամներ (ԲԱ)՝ Ա. Սերոբյան, Ա. Իսկանդարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Բաղդասարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության գնահատում:
3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի գնահատում:
4. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

2. ՀՀ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության գնահատում

2.1 ՀՀ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի գնահատում

3.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը սահմանված կարգով և ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին է ներկայացրել իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ Հրավերի տեքստի հավելված N 3 և 3.1: Ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերի տեքստով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրին:

Հիմք ընդունելով 2.1 և 3.1 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/8» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին, ճանաչել **ընտրված մասնակից**:
2. Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ընտրված մասնակցի իրական շահառուների մասին տվյալները:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սույն ընթացակարգի հետ կապված անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օր:

4.Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 29-րդ կետը՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահող՝ _____ Է. Գյումրյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ Շ. Հարությունյան

_____ Հ. Մելիքյան

_____ Ա. Սերոբյան

_____ Ա. Իսկանդարյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ.Բաղդասարյան